ԱՋԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ 29/03/2018թ. ԹԻՎ 1/221Ա ՈՐՈՇՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՋԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

Թողարկողի անվանումը՝	**«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն**	
Կազմակերպաիրավական ձևը՝	Փակ բաժնետիրական ընկերություն	
Տեղեկություններ թողարկողի վերաբերյալ՝	Հասցե՝ 0047, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 20, Հեռախոս՝ (+374 10) 51 00 00, էլ. փոստ՝ info@fcc.am, Ինտերնետային կայք՝ www.fastcredit.am	
	Առաջին տրանշ	**Երկրորդ տրանշ**
Արժեթղթի դասը, տեսակը	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	Անվանական արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթի ձևը	Ոչ փաստաթղթային	Ոչ փաստաթղթային
Թողարկման արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	10,000 (տաս հազար)	10,000 (տաս հազար)
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)	10,000 (տաս հազար) ՀՀ դրամ	100 (հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը	100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ	1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամտաբերություն	10% տարեկան	6.9% տարեկան
Շրջանառության ժամկետը	24 ամիս	24 ամիս
Տեղաբաշխողի անվանումը՝	**«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ներդրումային ընկերություն**	
Կազմակերպաիրավական ձևը՝	Բաց բաժնետիրական ընկերություն	
Տեղեկություններ տեղաբաշխողի վերաբերյալ՝	Հասցե՝ 0018, ք. Երևան, Տիգրան Մեծի 32/1, Հեռախոս՝ (+374 10) 53 87 00, էլ. փոստ՝ armenbrok@armenbrok.com, Ինտերնետային կայք՝ www.armenbrok.am	

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՋԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 4

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 6

1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ 6

2. Թողարկողին և Թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր 11

3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ 14

4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ 15

5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն 16

6. Թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները 17

7. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները 18

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 21

8. Ռիսկային գործոններ 21

9. Հիմնական տեղեկատվություն 23

10. Տեղեկատվություն Թողարկվող պարտատոմսերի մասին 23

11. Առաջարկի ժամկետները և պայմանները 41

12. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 46

13. Լրացուցիչ տեղեկատվություն 47

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 48

14. Անկախ աուդիտորները 48

15. Ռիսկային գործոններ 48

16. Տեղեկատվություն Թողարկողի մասին 57

17. Բիզնեսի նկարագիրը 58

18. Թողարկողի կառուցվածքը 61

19. Զարգացման վերջին միտումները 61

20. Թողարկողի կառավարման մարմինները 63

21. Թողարկողի գործադիր տնօրենի տեղակալների եվ գլխավոր հաշվապահի գործառույթները 70

22. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը 71

23. Հսկող անձինք 76

24. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 77

25. Էական պայմանագրերը 77

26. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 78

27. Այլ տեղեկատվություն 78

ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ սփորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Վահե Բադալյան	Խորհրդի նախագահ		25.06.18թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վիգեն Բադալյան	Խորհրդի անդամ		25.06.18թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Համբարձումյան	Խորհրդի անդամ		25.06.18թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հակոբ Ղոնջեյան	Գործադիր տնօրեն,Վարչության նախագահ		25.06.18թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կամո Մայիլյան	Գործադիր տնօրենի տեղակալ, Վարչության անդամ		25.06.18թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ

Հակոբ Ղոնջեյան	Գործադիր տնօրեն, Վարչության նախագահ		25.06.18թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **Թողարկող** կամ **Կազմակերպություն**) պարտատոմսերի ազդագրի (այսուհետ՝ **Ազդագիր**) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա: Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ծեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Թողարկողի և/կամ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ (այսուհետ՝ **Տեղաբաշխող**) գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքերում՝ www.fastcredit.am , www.armenbrok.am:

2015, 2016, 2017 և 2018 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուրը Թողարկողի տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվություններն են, իսկ մնացած տվյալների ներկայացման աղբյուրն է Կազմակերպության ներքին տեղեկատվական համակարգը, ինչպես նաև պետական մարմինների և այլ կազմակերպությունների կողմից պաշտոնապես հրապարակված տեղեկատվությունը:

1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն,
ռուսերեն՝ «Фаст Кредит Капитал» Универсальная Кредитная Организация Закрытое Акционерное Общество,
անգլերեն՝ “Fast Credit Capital” Universal Credit Organization Closed Joint Stock Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ,
ռուսերեն՝ «Фаст Кредит Капитал» УКО ЗАО,
անգլերեն՝ "Fast Credit Capital" UCO CJSC,

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Նորք- Մարաշ, Գ. Հովսեփյան 20

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+ 374 10) 510 000,
էլ. փոստ՝ info@fcc.am
ինտերնետային կայք՝ www.fastcredit.am

Թողարկողի հիմնադրման երկիրը՝
Հայաստանի Հանրապետություն:

Կազմակերպությունը գրանցվել է 14.10.2011թ.-ին, Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ **ՀՀ**) Կենտրոնական բանկի (այսուհետ՝ **ԿԲ**) կողմից գրանցման համար՝ 37: Ներկայումս Կազմակերպությունն ունի 11 մասնաճյուղ Երանում, 10 մասնաճյուղ՝ ՀՀ տարբեր մարզերում և 1 ներկայացուցչություն՝ Արմավիր քաղաքում:

Կազմակերպության տեսլականն է

Լինել դինամիկ զարգացող ֆինանսական կառույց Հայաստանում և արագ ու որակյալ սպասարկման միջոցով հաճախորդներին մատուցել բազմաբնույթ ֆինանսական ծառայություններ:

Կազմակերպությունը աշխատում է շաբաթը 7 օր, օրը 24 ժամ աշխատանքային ռեժիմով, ինչը շատ հարմար է իր հաճախորդների համար: Որպես նորարարություն հարկ է նշել, որ Կազմակերպությունը աշխատում է իր սեփական FCC Bank ծրագրով, ինչպես նաև ունի շատ հարմար հավելված հեռախոսների համար:

Հարկ է նշել, որ ոչ լոմբարդային վարկերը չունեն որևէ թաքնված վճարներ, իսկ անշարժ և շարժական գույքի գնահատման ծախսերը կազմակերությունը վերցնում է իր վրա:

Իր առջև ունենալով նպատակ դառնալ բանկ ընկերությունը օրեցօր բարելավում է իր սպասարկամն որակները, ավելացնում ծառայությունները ինչպես նաև

հաճախորդների սպասարկումն առավել հարմարավետ դարձնելու համար ավելացնում մասնաճյուղերի թիվը՝ ոչ միայն Երևանում այլև ՀՀ մարզերում:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 2,500,000,000 (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, որը կազմված է 500,000 (հինգ հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Վահե Բադալյանը և Վիգեն Բադալյանը տիրապետում են Կազմակերպության 100% բաժնետոմսերին, յուրաքանչյուրը 50% և միաժամանակ հանդիսանում են Կազմակերպության խորհրդի անդամ:

Կազմակերպության ստեղծման նպատակն է վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որը իրավունք ունի իրականացնելու ունիվերսալ վարկային կազմակերպության գործունեություն՝ ԿԲ-ի կողմից վարկային կազմակերպության լիցենզիա ստանալու օրվանից:

Կազմակերպությունը վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները և կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է վարկային կազմակերպության գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրության շրջանակներում կարող է՝

ա) իրավաբանական անձանցից, իրենց մասնակիցներից, ՀՀ-ից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ,

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ինչպես նաև ՀՀ օրենքով չարգելված եղանակով ներգրավել փոխառություններ, այդ թվում հրապարակային օֆերտայի միջոցով,

գ) տրամադրել երաշխիքներ,

դ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել արժեթղթեր, կատարել նման այլ գործառնություններ,

ե) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

զ) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային

(լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),

է) գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և մետաղադրամ.

ը) գնել և վաճառել արտարժույթ, ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

թ) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ժ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

ժա) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

ժբ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

ժգ) ԿԲ-ի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

Կազմակերպության կառուցվածք



Պարտատոմսերի վերաբերյալ հարցերի պատասխանող կոնտակտային անձ՝
Դիլինգի վարչության պետ Էդմոնդ Էլոյան
Էլ. հասցե՝ edmond.eloyan@fcc.am
Հեռ.՝ 010 510000 (1070)

2. Թողարկողին և Թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկեր

Ներդրողները՝ մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:
Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հետ և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը:

Իրացվելիության ռիսկ, երբ Կազմակերպության ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով դժվարություններ կարող են առաջանալ Կազմակերպության ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու ժամանակ, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու հետ կապված:

Վարկային ռիսկը, երբ Կազմակերպության նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողից պայմանագրային պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չեն կատարվում, ինչը կարող է վնաս հասցնել Կազմակերպության կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը Թողարկողի կարևորագույն խնդիրներից է:

Տոկոսադրույքի ռիսկը, երբ շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, տոկոսային եկամուտների և ի վերջո նաև կապիտալի վրա:

Արտարժութային ռիսկը սահմանվում է որպես փոխարժեքի փոփոխության հետևանքով Կազմակերպության ֆինանսական արդյունքների և կապիտալի վրա ունեցած բացասական ազդեցության ռիսկ:

Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ:

Կախված ռիսկի ծագման աղբյուրից՝ գործընկերոջ ռիսկը կարելի է տրոհել ռիսկերի հետևյալ տեսակների.

Մայր գումարի կորստի ռիսկը դրամական այն միջոցների կորստի ռիսկն է, որոնք Կազմակերպությունը գործընկերոջը տրամադրել է որպես վարկ կամ ստացվելիք փոխանցման դիմաց կանխավճար/փոխանցում և որոնք գործընկերը չի վերադարձրել կամ հետ չի վճարել ժամանակին՝ պայմանագրով սահմանված ամբողջ գումարի չափով (գործընկերոջ դեֆոլտ): Մայր գումարի կորստի ռիսկը հավասար է վճարման/փոխանցման ենթակա դրամական միջոցներին՝ գործարքի գումարին, եթե գործարքը նախատեսվում է կատարել մեկ փոխանցումով, կամ համապատասխան մնացորդային գումարին, եթե գործարքը նախատեսվում է կատարել մի քանի փոխանցումներով:

Փոխարինման ռիսկը վնասի այն չափն է, որը հավասար է տվյալ գործարքը շուկայում համարժեք գործարքով փոխարինման հետևանքով կրած ծախսերին: Փոխարինման ռիսկն առկա է այն դեպքերում, երբ Կազմակերպությունն ունի գործընկերոջից որոշակի ժամանակ հետո ստացվելիք դրամական հոսքեր:

Առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ: Հաճախ իմաստ ունի տարանջատել այս երկու կատեգորիաները, քանի որ որոշ գործառնությունների գծով գործընկերոջ ռիսկը տարբեր է գործարքի կյանքի ընթացքում: Այն գործարքների դեպքում, երբ կողմերից երկուսն էլ փոխանակում են դրամական հոսքեր, ռիսկն ավելի բարձր է գործարքով նախատեսվող վճարումների իրականացման օրը (երբ Կազմակերպությունն իրականացնում է վճարումն առանց ստանալու հաստատումը, որ գործընկերոջ հանդիպակաց վճարումը հաշվեգրված է), քան վճարումների օրվան նախորդող ժամանակաշրջանում, երբ Կազմակերպությունը հնարավորություն ունի զերծ մնալ իր վճարումների կատարումից, եթե ակնհայտ է, որ գործընկերը չի կատարելու իր վճարումը:

Թողարկողի ռիսկ: Գործընկերոջ ռիսկի համատարած օգտագործվող ենթակատեգորիա է հանդիսանում թողարկողի ռիսկը, որը սահմանվում է որպես արժեթուղթ թողարկողի դեֆոլտի կամ սնանկության հետևանքով հնարավոր կորստի հավանականություն:

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Կազմակերպության կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով: Դա կարտահայտվի Կազմակերպության կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Վարկային կազմակերպության գործունեության լիցենզավորման և կարգավորման նպատակը ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունն է, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Կազմակերպության գործառնությունների վրա:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա:

Գործառնական ռիսկ, որը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է կորուստ բերել Թողարկողի կապիտալի և/կամ շահույթի վրա:
Կազմակերպությունում գործառնական ռիսկը կառավարվում է «Անձնակազմի հսկողության» բաժնի կողմից:

Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց

գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իրեն շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանն:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժութային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության, հետևաբար՝ իրացվելիության վրա:

3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Կազմակերպության գործունեությունը մշտապես գտնվում է Կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին:

2016թ.-ի ընթացքում Կազմակերպության ակտիվներն աճել են 19.72%-ով և կազմել 19,424,420,000 ՀՀ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերի և վաճառքի համար մատչելի ներդրումների աճով: Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2016թ.-ի ընթացքում աճել է 16.4%-ով և կազմել՝ 4,423,578,000 ՀՀ դրամ:

Պարտավորություններն աճել են 20.72%-ով և կազմել՝ 15,000,842,000 ՀՀ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է փոխառու միջոցների աճով: 2015 թվականի համեմատ, 2016թ.-ին Կազմակերպության վարկային պորտֆելն աճել է 3,040,306,000 ՀՀ դրամով կամ 20.18%-ով:

31.12.2016թ. դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելը կազմել է շուրջ 18,1 մլրդ ՀՀ դրամ, ինչն իրենից ներկայացնում է 20.18% աճ 2015թ.-ի նկատմամբ:

31.12.2017թ. դրությամբ Կազմակերպության ակտիվները կազմել են 24,585,624,000 ՀՀ դրամ, պարտավորությունները՝ 21,363,570,000 ՀՀ դրամ, կապիտալը՝ 3,222,054,000 ՀՀ դրամ: 2017 թվականի կուտակված զուտ շահույթը կազմել է 2,010,218,000 ՀՀ դրամ:

2016թ.-ի ընթացքում Կազմակերպությունը ստացել է 2,333,230,000 ՀՀ դրամի զուտ շահույթ: Կազմակերպության փաստացի համալրված կանոնադրական կապիտալը 31.03.2018թ. դրությամբ կազմել է 2,500,000,000 ՀՀ դրամ, որը բաղկացած է 500,000 հատ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

31.12.2017թ.-ից մինչև Ազդագրի գրանցման ներկայացման օրը, Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի էական փոփոխություն կարող է համարվել Կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացումը 500,000,000 ՀՀ դրամով:

Ազդագրի գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, Կազմակերպության դեմ չկան և չեն սպասվում դատական հայցեր, որոնք կարող են նյութական, բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ Կազմակերպության զարգացման հեռանկարների վրա:

4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ

Կազմակերպության 2015, 2016 և 2017 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «ԳՐԱՆՏ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ **Աուդիտորական կազմակերպություն**), որը գրանցվել է ՀՀ-ում 1990 թվականին:

Աուդիտորական կազմակերպության հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, Վաղարշյան 8/1 հեռ.՝ +374 10 26-09-64, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.grantthornton.am:

Աուդիտորական կազմակերպության տնօրենն է Գագիկ Գյուլբուդաղյանը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: Աուդիտորական կազմակերպության եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Թողարկողի կանոնադրությունով սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները՝

1. Ընդհանուր ժողով,
2. Խորհուրդ,
3. Վարչություն,
4. Գործադիր տնօրեն:

Ընդհանուր ժողովը Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Խորհուրդը բաղկացած է 3 անդամից և ընտրվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան: Վարչությունը և Գործադիր տնօրենը կառավարում են Կազմակերպության առօրյա ընթացիկ գործունեությունը:

Կազմակերպության Խորհուրդը.

Անուն Ազգանուն	**Պաշտոն**	**Փորձառությունը**
Վահե Ռոմիկի Բադալյան	Խորհրդի նախագահ	28 տարի
Վիգեն Ռոմիկի Բադալյան	Խորհրդի անդամ	28 տարի

Հարություն Աշոտի Համբարձումյան	Խորհրդի անդամ	9 տարի

Կազմակերպության Վարչությունը.

Անուն Ազգանուն	**Պաշտոն**	**Փորձառությունը**
Հակոբ Ղոնջեյան	Գործադիր տնօրեն, Վարչության նախագահ	15 տարի
Կամո Մայիլյան	Գործադիր տնօրենի տեղակալ, Վարչության անդամ	10 տարի

Կազմակերպության վերստուգողն է Լուսինե Հարոյանը:

Կազմակերպության աշխատակիցների թիվը 31.12.2017թ.-ի դրությամբ կազմել է 425:

6. Թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

	Առաջին տրանշ	Երկրորդ տրանշ
Արժեթղթի դասը, տեսակը	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	
Արժեթղթի ձևը	Ոչ փաստաթղթային	
Թողարկվող արժեթղթերի ծավալը	100,000,000 ՀՀ դրամ,	1,000,000 ԱՄՆ դոլար
Թողարկվող արժեթղթերի քանակը	10,000 հատ	10,000 հատ
Մեկ արժեթղթի անվանական արժեքը	10,000 ՀՀ դրամ	100 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամտաբերություն	10%	6.9%
Շրջանառության ժամկետը	24 ամիս	

Արժեկտրոնների վճարման հաճախականությունը	Կիսամյակային
Տվյալ թողարկման հերթական համարը	1

Թողարկողի պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:

Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը պարտատոմսերի տեղաբաշխման օրն է, որը հանդիսանում է նաև թողարկման օր:

Պարտատոմսերի տեղաբաշխման օրը ենթակա է որոշման Թողարկողի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխումից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ, ինչը կհրապարակվի Թողարկողի www.fastcredit.am և տեղաբաշխողի www.armenbrok.am ինտերնետային կայքում՝ հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն մեկ օր առաջ: Թողարկողը նախատեսում է պարտատոմսերի տեղաբաշխումը իրականացնել մինչև 31.07.2018թ.:

Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (այսուհետ՝ **Բորսա**) անդամները, որոնց ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական կայքում ՝ www.nasdaqomx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել Բորսայի անդամների միջոցով:

Թողարկողը կնքելու է համապատասխան պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնելու համար ՝ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի հետ (այսուհետ նաև՝ **Շուկա ստեղծող**)՝ Կազմակերպության պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով:

Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցները հավասարապես ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

7. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները[1]

(հազ. դրամ)

[1] Թողարկողի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռն և դրամական հոսքերի մասին տվյալները ներառված են Հավելված 1-ում

Ցուցանիշի անվանումը	2018 առաջին եռամսյակ	2017 առաջին եռամսյակ	2017	2016	2015
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	410,410	403,403	2,010,218	2,333,230	1,769,935
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,578,727	4,827,305	3,822,816	4,110,776	2,663,007
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)%	8.96%	8.36%	52.58%	56.76%	66.46%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	24,074,788	20,690,814	22,005,022	17,824,216	15,210,449
Ակտիվների շահութաբերություն (ROA)%	1.70%	1.95%	9.14%	13.09%	11.64%
Գործառնական եկամուտ	1,005,994	1,185,957	4,411,916	5,010,838	4,591,172
Զուտ շահույթի մարժա (NPM), %	40.80%	34.01%	45.56%	46.56%	38.55%

Ակտիվների օգտագործման գործակից (AU)	4.18%	5.73%	20.05%	28.11%	30.18%
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.26	4.29	5.76	4.34	5.71
Զուտ տոկոսային եկամուտ	914,083	1,121,689	4,047,544	4,675,411	4,364,200
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	22,571,904	19,093,406	20,372,886	16,583,952	14,174,784
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	4.05%	5.87%	19.87%	28.19%	30.79%
Տոկոսային եկամուտ	1,496,598	1,559,450	6,002,978	6,416,952	5,931,524
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	6.63%	8.17%	29.47%	38.69%	41.85%
Տոկոսային ծախսեր	582,515	437,761	1,955,434	1,741,541	1,567,324

Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	22,225,302	15,286,839	20,750,430	14,562,057	11,884,139
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	2.62%	2.86%	9.42%	11.96%	13.19%
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	5,000	4,000	4,000	4,000	4,000
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	82.08	100.85	502.55	583.31	442.48
Սպրեդ[2]	4.01%	5.30%	20.04%	26.73%	28.66%

[2] Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) – (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9. Հիմնական տեղեկատվություն

Կազմակերպության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը: Ընդ որում, պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման հետևանքով մոտավոր կանխատեսվող գումարները՝ ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 930,000 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի թողարկման դեպքում՝ 93,000,000 ՀՀ դրամը նախատեսվում է բաշխել հավասարապես կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

10. Տեղեկատվություն Թողարկվող պարտատոմսերի մասին

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով թողարկվող անվանական, արժեկտրոնային ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության պարտատոմսեր են, որոնց թողարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ **Կենտրոնական դեպոզիտարիա**) կողմից:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տաս հազար) ՀՀ դրամ	100 (հարյուր) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը	10,000 (տաս հազար) հատ	10,000 (տաս հազար) հատ
Պարտատոմսերի թողարկման ծավալը՝	100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ	1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար

Պարտատոմսեր թողարկման և տեղաբաշխման ամսաթվերը	Թողարկողը Առաջին և Երկրորդ տրանշերով տեղաբաշխումը իրականացնելու է նույն օրը: Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը տեղի կունենա ՀՀ ԿԲ-ի կողմից պարտատոմսերի ազդագրի գրանցումից հետո մինչև 31.07.2018թ. ընկած ժամանակահատվածը հնարավորինս սեղմ ժամկետներում՝ Թողարկողի Վարչության որոշմամբ: Այդ մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ քան 3 (երեք) աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.fastcredit.am և www.armenbrok.am: Թողարկման և տեղաբաշխման օրերը համընկնում են:	
Տեղաբաշխող	Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվելու են մասնագիտացված տեղաբաշխողի՝ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի կողմից՝ համաձայն կողմերի միջև 13.03.2018 թվականի կնքված՝ տեղաբաշխման պայմանագրի և դրա փոփոխությունների:	
Տեղաբաշխման ձևը	Չերաշխավորված	Երաշխավորված
Տեղաբաշխման գործընթացը	7,000 (յոթ հազար) հատ պարտատոմսերի դեպքում՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ	7,000 (յոթ հազար) հատ պարտատոմսերի դեպքում՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ

	բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:	հայտեր չեն կարող ներկայացվել:
	3,000 (երեք հազար) հատ պարտատոմսերը անվանական արժեքով ձեռք է բերելու Շուկա ստեղծողը:	3,000 (երեք հազար) հատ պարտատոմսերը անվանական արժեքով ձեռք է բերելու Շուկա ստեղծողը:
Շուկա ստեղծող	Թողարկողը կնքելու է համապատասխան պայմանագիր «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի հետ՝ Կազմակերպության պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով:	Թողարկողը կնքելու է համապատասխան պայմանագիր «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի հետ՝ Կազմակերպության պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով:
	Այս նպատակով Շուկա ստեղծողը ձեռք է բերելու 3,000 (երեք հազար) հատ պարտատոմսեր անվանական արժեքով :	Այս նպատակով Շուկա ստեղծողը ձեռք է բերելու 3,000 (երեք հազար) հատ պարտատոմսեր անվանական արժեքով :

Կազմակերպության պարտատոմսեր թողարկելու որոշման համառոտ բովանդակություն

Կազմակերպության անվանական պարտատոմսերը թողարկվելու են Կազմակերպության Խորհրդի 2018թ. մարտի 12-ի և 2018թ. հունիսի 25-ի որոշման համաձայն (նիստի արձանագրությունը ներկայացված է Հավելված 2-ում), որոշված է թողարկել և տեղաբաշխել 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ և 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ արժեկտրոնային պարտատոմսեր: Թողարկվող մեկ պարտատոմսի անվանական արժեքը սահմանվել է համապատասխանաբար 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ և 100 (հարյուր) ԱՄՆ դոլար:

Պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը սահմանվել է համապատասխանաբար 10 (տասը) տոկոս՝ ՀՀ դրամով պարտատոմսերի համար և 6.9 (վեց ամբողջ ինը տասնորդական) տոկոս՝ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի համար:

Միաժամանակ սահմանվել է, որ ԱՄՆ դոլարով թողարկվող 7,000 (յոթ հազար) հատ և ՀՀ դրամով թողարկվող 7,000 (յոթ հազար) հատ պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսա-ի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել: Մնացած ԱՄՆ դոլարով թողարկվող 3,000 (երեք հազար) հատ և ՀՀ դրամով թողարկվող 3,000 (երեք հազար) պարտատոմսերը անվանական արժեքով ձեռք է բերելու Շուկա ստեղծողը: Որից հետո՝ 1 (մեկ) ամսվա ընթացքում, հնարավորինս սեղմ ժամկետներում պարտատոմսերը պետք է ցուցակվեն Բորսայի պարտատոմսերի հիմնական ցուցակում:

Կազմակերպության Խորհրդի որոշմամբ սահմանվել է, որ Կազմակերպության կողմից պարտատոմսերի վաղաժամկետ հետգնում և մարում չի նախատեսվում:

Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ, իսկ վերադարձման ենթակա գումարները տեղաբաշխումը չեղյալ համարելու որոշումն ընդունելու օրվանից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողի կողմից ենթակա են վերադրաձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատսխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ: Տեղաբաշխումը չեղյալ համարելու որոշման կայացման դեպքում տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և տեղաբաշխումը չեղյալ համարելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակահատվածի համար:

11. Առաջարկի ժամկետները և պայմանները

Առաջարկի պայմանները, ժամանակացույցը և առաջարկից օգտվելու համար անհրաժեշտ գործողությունները

Ազդագրի հիման վրա տեղաբաշխվող պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը կազմում է 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ և 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար: Յուրաքանչյուրի դեպքում մեկ պարտատոմսի գինը կազմում է համապատասխանաբար 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ և 100 (հարյուր) ԱՄՆ դոլար:

Ընդ որում ԱՄՆ դոլարով թողարկվող 10,000 (տաս հազար) հատ պարտատոմսերից 3,000 (երեք հազար) հատ պարտատոմսերը և ՀՀ դրամով թողարկվող 10,000 (տաս հազար) հատ պարտատոմսերից 3,000 (երեք հազար) հատ պարտատոմսերը անվանական արժեքով ձեռք է բերելու Շուկա ստեղծողը:

Պարտատոմսերի տեղաբաշխման օրը, որը հանդիսանում է նաև թողարկման օր, ենթակա է որոշման Թողարկողի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխումից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ, ինչը կհրապարակվի Թողարկողի www.fastcredit.am և տեղաբաշխողի www.armenbrok.am ինտերնետային կայքում՝ հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 1 (մեկ) օր առաջ:

Տեղաբաշխումը

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվելու են մասնագիտացված տեղաբաշխողի՝ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի կողմից՝ համաձայն կողմերի միջև 13.03.2018 թվականի կնքված՝ տեղաբաշխման պայմանագրի և դրա փոփոխությունների:

Տեղաբաշխողի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, Տիգրան Մեծի 32/1, թիվ 8 տարածք, հեռ.՝ +(374-10) 53-87-00, էլ. փոստ՝ armenbrok@armenbrok.com, պաշտոնական ինտերնետային կայք՝ www.armenbrok.am:

Պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (երաշխավորված կամ չերաշխավորված), պարտատոմսերի ծավալը, քանակը, պարտատոմսերի տեղաբաշխման կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի իրավունքներն ու պարտականությունները, Տեղաբաշխողին վճարման ենթակա գումարի չափն ու կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի պատասխանատվությունը սահմանվել են վերջիններիս միջև կնքված պայմանագրով և դրա հիման վրա ներկայացվող հանձնարարականներով: Թողարկողը և Տեղաբաշխողը կնքել են պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր, որով երաշխավորված տեղաբաշխման ծավալը կազմում է ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար:

Տեղաբաշխման միջնորդավաճառը ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով տեղաբաշխվող պարտատոմսերի դեպքում սահմանվել է 0.7 (զրո ամբողջ յոթ տասնորդական) տոկոս՝ տեղաբաշխված պարտատոմսի անվանական արժեքից:

12. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Ազդագիրը ԿԲ-ի կողմից գրանցվելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո՝ կարգավորվող շուկայում պարտատոմսերը ցուցակելու և առևտրին թույլտարելու նպատակով Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետներում դիմելու է Բորսային: Սույն կետում նշված առևտրի թույլտվության հայցը կարող է նաև մերժվել Բորսայի կողմից: Տեղաբաշխման ավարտից հետո 60 օրյա ժամկետում պարտատոմսերի առևտրին թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ, իսկ վերադարձման ենթակա գումարները՝ տեղաբաշխումը չեղյալ համարելու որոշումն ընդունելու օրվանից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողի կողմից ենթակա են վերադրաձման, ինչն իրականացվելու է անկանխիկ եղանակով՝ համապատսխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ: Տեղաբաշխումը չեղյալ համարելու որոշման կայացման դեպքում տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և տեղաբաշխումը չեղյալ համարելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակահատվածի համար:

Այս պահին Թողարկողի կողմից Ազդագրով առաջարկվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրին ոչ մի շուկայում:

Թողարկողը կնքելու է համապատասխան պայմանագիր Շուկա ստեղծողի հետ՝ Կազմակերպության պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Այս նպատակով Շուկա ստեղծողը ձեռք է բերելու Առաջին և Երկրորդ տրանշերով թողարկվող պարտատոմսեր անվանական արժեքով՝ յուրաքանչյուրից 3,000 (երեք հազար) հատ:

Շուկա ստեղծողը Բորսայում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի ամենօրյա գնանշումներ: Թողարկողը նախատեսում է կնքել Բորսայում պարտատոմսերի ամենօրյա պարտադիր գնանշումներ կազմակերպելու մասին պայմանագիր՝ Տեղաբաշխողի հետ: Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները սահմանվում են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և Շուկա ստեղծողի կանոններով: Շուկա Ստեղծողը պարտավոր է՝

1. յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 11:00-15:00 ապահովել պարտատոմսերի երկկողմանի գնանշում,
2. երկկողմանի գնանշման ընթացքում գնման և/կամ վաճառքի հայտի բավարարման դեպքում 3 (երեք) րոպեում ապահովել նոր երկկողմանի գնանշում,

3. երկկողմանի գնանշման ընթացքում ապահովել տվյալ թողարկման պարտատոմսերի քանակի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ մասնակի բավարարման պայմանով,
4. երկկողմանի գնանշումը կատարել սահմանված սպրեդի սահմաններում, որը չպետք է գերազանցի 7 (յոթ) տոկոսը:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Անկախ աուդիտորները

Կազմակերպության 2015, 2016 և 2017 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է Աուդիտորական կազմակերպությունը, որը հանդիսանում է «Grant Thornton International Ltd»-ի անդամ:

Աուդիտորական կազմակերպությունը գրանցվել է ՀՀ-ում 1990 թվականին:

Աուդիտորական կազմակերպության հասցեն է՝ ՀՀ ք. Երևան Վաղարշյան 8/1, հեռ.՝ +374 10 26-09-64, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.grantthornton.am:

Հավելված 1

«ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2017թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ծանոթագրություն 1	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին.

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին («Ընկերություն») ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված Ընկերության 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա Կազմակերպության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին՝ համաձայն Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Կազմակերպության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններ և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2018թ. հունիսի 8-ի մեր եզրակացությունում:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության

պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտ անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունների՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքների համաձայն պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա՝ արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու

20 հունիսի 2018թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6,002,978	6,416,952
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(1,955,434)	(1,741,541)
Զուտ տոկոսային եկամուտներ	4,047,544	4,675,411
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	706	637
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(7,425)	(7,398)
Զուտ կոմիսիոն և այլ ծախսեր	(6,719)	(6,761)
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտ	144,425	95,832
Այլ եկամուտներ	226,666	246,356
Արժեզրկման (ծախս)/փոխհատուցում	73,068	(396,094)
Անձնակազմի գծով ծախսեր	(1,396,709)	(1,225,492)
Հիմնական միջոցների մաշվածություն	(91,056)	(81,744)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(3,833)	(2,845)
Այլ ծախսեր	(469,866)	(391,283)
Շահույթ մինչև հարկումը	2,523,520	2,913,380
Շահութահարկի գծով ծախս	(513,302)	(580,150)
Տարվա շահույթ	2,010,218	2,333,230
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	2,010,218	2,333,230

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ		
Դրամական միջոցներ	1,389,657	820,777
Հաճախորդներին տրված վարկեր	22,641,666	18,104,105
Հիմնական միջոցներ	359,721	292,116
Ոչ նյութական ակտիվներ	31,437	30,784
Հետաձգված հարկային ակտիվ	-	8,266
Այլ ակտիվներ	163,143	168,372
Ընդամենը՝ ակտիվներ	24,585,624	19,424,420
Պարտավորություններ և սեփական կապիտալ		
Պարտավորություններ		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,539,471	2,864,523
Փոխառություններ և վարկեր	16,210,959	11,697,534
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	367,278	276,111
Հետաձգված հարկային պարտավորություն	12,333	-
Այլ պարտավորություններ	233,529	162,674
Ընդամենը՝ պարտավորություններ	21,363,570	15,000,842
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	2,000,000	2,000,000
Գլխավոր պահուստներ	259,755	90,348
Չբաշխված շահույթ	962,299	2,333,230
Ընդամենը՝ սեփական կապիտալ	3,222,054	4,423,578
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ	24,585,624	19,424,420

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Կազմակերպության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից 2018թ. հունիսի 20-ին:

Հակոբ Ղոնջեյան / Վարդան Բաբայան

Գործադիր տնօրեն / Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2016թ. հունվար 1-ի դրությամբ	2,000,000	4,800	1,793,174	3,797,974
Հատկացում պահուստին	-	85,548	(85,548)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(1,707,626)	(1,707,626)
Սեփականատերերի հետ գործարքներ	-	85,548	(1,793,174)	(1,707,626)
Տարվա շահույթ	-	-	2,333,230	2,333,230
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	2,333,230	2,333,230
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,000,000	90,348	2,333,230	4,423,578
Հատկացում պահուստին	-	169,407	(169,407)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(3,211,742)	(3,211,742)
Սեփականատերերի հետ գործարքներ	-	169,407	(3,381,149)	(3,211,742)
Տարվա շահույթ	-	-	2,010,218	2,010,218
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	2,010,218	2,010,218
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,000,000	259,755	962,299	3,222,054

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	2,523,520	2,913,380
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	94,889	84,589
Վարկերի հնարավոր կորուստների արժեզրկման ծախս/(փոխհատուցում)	(73,068)	396,094
Այլ ակտիվների օտարումից վնաս	-	339
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային վերագնահատումից զուտ եկամուտ	(23,234)	(7,971)
Ստացվելիք տոկոսներ	19,687	(83,325)
Վճարվելիք տոկոսներ	189,623	343,012
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	2,731,417	3,646,118
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Հաճախորդներին տրված վարկեր	(4,470,233)	(3,348,957)
Այլ ակտիվներ	5,215	(3,403)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Այլ պարտավորություններ	70,740	20,097
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	(1,662,861)	313,855
Վճարված շահութահարկ	(401,536)	(704,733)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(2,064,397)	(390,878)

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների առք	(158,661)	(74,154)
Ոչ նյութական ակտիվների առք	(4,486)	(10,430)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(163,147)	(84,584)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	1,673,234	1,870,854
Փոխառություններ և վարկեր	4,328,188	468,249
Շահաբաժիններ բաժնետերերին	(3,211,742)	(1,707,626)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	2,789,680	631,477
Դրամական միջոցների զուտ աճ	562,136	156,015
Դրամական միջոցներ տարվա սկզբի դրությամբ	820,777	665,055
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա	6,744	(293)
Դրամական միջոցներ տարվա վերջի դրությամբ	1,389,657	820,777
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	6,022,665	6,333,627
Վճարված տոկոսներ	(1,765,811)	(1,398,529)

Ծանոթագրություն 1

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունները, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը՝ քաղված «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվի 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից, պատրաստված են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը՝ կից ծանոթագրություններով, հասանելի է «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության էլեկտրոնային հասցեում:

Հավելված 2

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ և ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ի

ԽՈՐՀՐԴԻ

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18/06/25-01

ք. Երևան	25.06.2018թ., ժամը՝ 10:00
Խորհրդի նախագահ՝	Վահե Բադալյան
Խորհրդի անդամներ՝	Վիգեն Բադալյան
	Հարություն Համբարձումյան
Քարտուղար՝	Աննա Սարգսյան
Հրավիրվածներ՝	Հակոբ Ղոնջեյան
	Կամո Մայիլյան
Օրակարգ	
1. «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Խորհրդի 12.03.2018թ-ի թիվ 18/03/12-01 որոշման 2-րդ, 3-րդ, 5-րդ կետերի փոփոխության հարցը: 2. «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Խորհրդի 12.03.2018թ-ին թիվ 18/03/12-01 որոշման 8-րդ կետի փոփոխության հարցը:	

Խորհրդի նախագահ՝ պարոն Վահե Բադալյանը ողջունեց ներկաներին և առաջարկեց անցնել օրակարգի հարցերի քննարկմանը:

➢ Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց Հակոբ Ղոնջեյանը: Նա ներկայացրեց Խորհրդի 12.03.2018թ.-ին կայացած նիստի առաջին հարցի որոշման 2-րդ, 3-րդ, 5-րդ կետերի փոփոխություն կատարելու առաջարկ, կապված շուկայում կայացրած ուսումնասիրությունների հետ: Նա առաջարկեց նվազեցնել թողարկվող պարտատոմսերի ծավալը, հասցնելով այն՝ ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի, կազմված 100 (հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով 10,000 (տաս հազար) հատ պարտատոմսից, իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտարոնսերի դեպքում 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամի, կազմված 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով 10,000 (տաս հազար) հատ պարտարոմսից:

Ներկաներն արտահայտեցին իրենց կարծիքները, այնուհետև Հակոբ Ղոնջեյանի կողմից առաջադրված հարցը դրվեց քվեարկության: Քվեարկությունն անցավ միաձայն, կողմ 3, դեմ 0:

Խորհուրդը որոշեց՝

1. Հաստատել 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 2-րդ, 3-րդ, 5-րդ կետերի փոփոխությունը:

2. 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 2-րդ կետում «2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար)» արտահայտությունը փոխարինել «1,000,000 (մեկ միլիոն)» արտահայտությամբ, իսկ «25,000 (քսանհինգ հազար)» արտահայտությունը՝ «10,000 (տաս հազար)» արտահայտությամբ,

3. 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 3-րդ կետում «250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն)» արտահայտությունը փոխարինել «100,000,000 (հարյուր միլիոն)» արտահայտությամբ, իսկ «25,000 (քսանհինգ հազար)» արտահայտությունը՝ «10,000 (տաս հազար)» արտահայտությամբ,

4. 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 5-րդ կետում «ԱՄՆ դոլարով թողարկվող 20,000 (քսան հազար)» արտահայտությունը փոխարինել «ԱՄՆ դոլարով թողարկվող 7,000 (յոթ հազար)» արտահայտությամբ, իսկ «ՀՀ դրամով թողարկվող 20,000 (քսան հազար)» արտահայտությունը՝ «ՀՀ դրամով թողարկվող 7,000 (յոթ հազար)» արտահայտությամբ:

5. 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 5-րդ կետում «ԱՄՆ դոլարով թողարկվող 5,000 (հինգ հազար)» արտահայտությունը փոխարինել «ԱՄՆ դոլարով թողարկվող 3,000 (երեք հազար)» արտահայտությամբ, իսկ «ՀՀ դրամով թողարկվող 5,000 (հինգ հազար)» արտահայտությունը՝ «ՀՀ դրամով թողարկվող 3,000 (երեք հազար)» արտահայտությամբ:

6. Սույն որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ի

ԽՈՐՀՐԴԻ

➢ Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց Հակոբ Ղոնջեյանը: Նա ներկայացրեց Ընկերության 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 8-րդ կետը, ապա առաջարկեց կատարել փոփոխություն՝ 13.03.2018թ-ի «Արմենբրոկ» բաց բաժնետիրական ներդրումային ընկերության հետ կնքված պարտատոմսերի մասնակի երաշխավորված տեղաբաշխման պայմանագրում հանել «մասնակի» բառը:

Ներկաներն արտահայտեցին իրենց կարծիքները, այնուհետև Հակոբ Ղոնջեյանի կողմից առաջադրված հարցը դրվեց քվեարկության: Քվեարկությունն անցավ միաձայն, կողմ 3, դեմ 0:

Խորհուրդը որոշեց՝

1. 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 8-րդ կետից հանել «մասնակի» բառը,
2. Հանձնարարել Ընկերության Գործադիր տնօրենին կատարել համապատասխան փոփոխություններ «Արմենբրոկ» բաց բաժնետիրական ներդրումային ընկերության հետ 13.03.2018թ.-ին կնքված՝ պարտատոմսերի մասնակի երաշխավորված տեղաբաշխման պայմանագրում:
3. Սույն որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

Վահե Բադալյան _____

Վիգեն Բադալյան _____

Հարություն Համբարձումյան _____

ք. Երևան 2018թ. Հունիսի 25-ին

Ժամ՝ 10:00

ՈՐՈՇՈՒՄ N 18/06/25-01

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Խորհրդի 12.03.2018թ.-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 2-րդ, 3-րդ, 5-րդ և 8-րդ կետերի փոփոխությունները հաստատելու վերաբերյալ

Քննարկելով «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Խորհրդի 12.03.2018թ.-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 2-րդ, 3-րդ, 5-րդ և 8-րդ կետերի փոփոխությունները՝ **Խորհուրդը որոշեց**՝

1. Հաստատել 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 2-րդ, 3-րդ, 5-րդ կետերի փոփոխությունը:
2. 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 2-րդ կետում «2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար)» արտահայտությունը փոխարինել «1,000,000 (մեկ միլիոն)» արտահայտությամբ, իսկ «25,000 (քսանհինգ հազար)» արտահայտությունը՝ «10,000 (տաս հազար)» արտահայտությամբ,
3. 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 3-րդ կետում «250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն)» արտահայտությունը փոխարինել «100,000,000 (հարյուր միլիոն)» արտահայտությամբ, իսկ «25,000 (քսանհինգ հազար)» արտահայտությունը՝ «10,000 (տաս հազար)» արտահայտությամբ,
4. 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 5-րդ կետում «ԱՄՆ դոլարով թողարկվող 20,000 (քսան հազար)» արտահայտությունը փոխարինել «ԱՄՆ դոլարով թողարկվող 7,000 (յոթ հազար)» արտահայտությամբ, իսկ «ՀՀ դրամով թողարկվող 20,000 (քսան հազար)» արտահայտությունը՝ «ՀՀ դրամով թողարկվող 7,000 (յոթ հազար)» արտահայտությամբ:
5. 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 5-րդ կետում «ԱՄՆ դոլարով թողարկվող 5,000 (հինգ հազար)» արտահայտությունը փոխարինել «ԱՄՆ դոլարով թողարկվող 3,000 (երեք հազար)» արտահայտությամբ, իսկ «ՀՀ դրամով թողարկվող 5,000 (հինգ հազար)» արտահայտությունը՝ «ՀՀ դրամով թողարկվող 3,000 (երեք հազար)» արտահայտությամբ:

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ի

ԽՈՐՀՐԴԻ

6. 12.03.2018թ-ի Խորհրդի թիվ 18/03/12-01 որոշման 8-րդ կետից հանել «մասնակի» բառը,
7. Հանձնարարել Ընկերության Գործադիր տնօրենին կատարել համապատասխան փոփոխություններ «Արմենմրոկ» բաց բաժնետիրական ներդրումային ընկերության հետ 13.03.2018թ.-ին կնքված՝ պարտատոմսերի մասնակի երաշխավորված տեղաբաշխման պայմանագրում:
8. Սույն որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ _____ **Վահե Բադալյան**

Խորհրդի քարտուղար՝ _____ **Աննա Սարգսյան**

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ N 13

27/06/2018

ՀՎՀՀ 23 02251606

	Կոդ	Դեբետ	Գումար AMD
Սոցապ N:			50000.00
ՎՃԱՐՈՂ: ՏԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ ՈՒՎԿ ՓԲԸ	16328	8041029 3327	
Բանկ: "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ "ՏԻԳՐԱՆ ՄԵԾ" ՄԱ			Տուգանքը օրվա
	Կոդ	Կրեդիտ	
ՍՏԱՑՈՂ: Կենտրոնական Բանկ			Գումարը տուգանք
Բանկ: Կենտրոնական Գանձապետարան	90000	5016119	

Գումարը տառերով

Հիսուն հազար դրամ

Վճարման նպատակ

Գրանցված պարտատոմսերի ազդագրում լրացում կատարելու համար

Գումարը դրամով 50000.00

Կուրս 1.00 /1

Գործ. տիպ

Վճար. նպատ

Վճար. ժամկ

Հերթ.վճար

N